ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Ջ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ, Ն. Ծ. ՊԱՊՈՒԽՅԱՆ

1895 թ. համիդյան ջարդերից ու բռնագաղթերից հետո Թուրքիայից Բուլղարիա հանգրվանեցին ավելի քան 20 հազար հայեր։ Մինչ այդ այնտեղ կար մոտավորապես 13 հազար հայ[1]։ Եկվորների մեջ կային ազգային-աղատագրական պայքարի գործիչներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, ուսուցիչներ, խմբագիրներ, ճարտարապետներ և հայ մտավորականության այլ ներկայացուցիչներ։

Բուլղարական կառավարությունը, նկատի ունենալով հայ-բուլղարական դարավոր բարեկամությունը, ավանդական կապերն ու համատեղ պայքարը օսմանյան տիրապետության դեմ, երկրի դռները լայնորեն բացեց հայ տարագիրների առջև։ Երկու ժողովուրդների կենցաղի, սովորությունների, ավանդույթների ու մշակույթների ընդհանրությունները բնիկ ժողովրդի բացառիկ ջերմ վերաբերմունքի պատճառը դարձան։ Առանձնահատուկ ուշադրության արժանացան հայ մտավորականության ներկայացուցիչները։ Դրանց թվում էր 1895-ի հոկտեմբերին Բուլղարիա ժամանած մեծ հայրենասեր, հմուտ ճարտարապետ-շինարար Թորոս Հարությունի Թորամանյանը։ Նրա գործունեությունը սկզբից ևեթ բարձր գնահատեցին բուլղար և հայ մասնագետներն ու հասարակական-քաղաքական գործիչները։

Կ. Պոլսում իր գործերով արդեն համբավված այս մասնագետի՝ Բուլղարիայում առաջին գնահատողը եղավ նույնպես Բոսֆորի ափերից վտարանդի, Իտալիայում կրթություն ստացած ճարտարապետ, հետագայում պրոֆեսոր Լևոն Կյուրեղյանը (1869—1950)։ Երկրի սահմանագլխից սկսվում է այդ բախտակից գործընկերների մտերմությունը։ Նրանք մեկնում են Ֆիլիպե (Պլովդիվ), ապա՝ Սոֆիա։ Կրթական նախարար Կ. Վելիչկովի համակրանքին արժանանալով, նրանից ստանում են ժամանակավոր մի հրամանագիր և «ձեռք-ձեռքի տված» սկսում ճարտարել, իրենց բնակած Տրգովսկա փողոցը կերպարանափոխել «նոր ու գեղեցիկ շենքերով»[2]։ Բայց այդ փողոցը 1944-ին ռմբակոծվելով ավերվել է, իսկ հետպատերազմյան վերակառուցումների ժամանակ վերացվել։ Նրա տեղում բարձրանում է ներկայիս կառավարական շենքը։

Լ. Կյուրեղյանը պատմում է հետևյալ ուշագրավ միջադեպը. «Օր մըն ալ Թ. Թորամանյան աներևութացավ։ Կ. Վելիչքովը հարցուց անոր մասին, չկրցա տեղեկություն մը տալ, բայց ապահովցուցի, թե հետազոտության ելած է։ Եվ արդարև, երկու շաբաթ հետո հայտնվեցավ։ Ռիլայի վանքեն կուգար։ Սեղանին վրա մագաղաթյա թափանցիկ լայն թերթ մը ծավալելով.— Ահա Պուլկարիս ապագա Ազգային ժողովի պալատին հատակագիծը,—ըսավ...

Կ. Վելիչքով հիացած մնաց, երբ ուսումնասիրեց պուլկար Ազգային ժողովի պալատին հատակագիծը.

— Ժողովի պալատի հատակագիծը շինարարության նախարարությունը չուզեց վավերացնել,—բավական օրեր հետո անոր ըսավ ցավով Կ. Վելիչքով,—մեծ ծախսերու կկարոտի։

---

1 Софийски градски окръжен архив, ф. 453, оп. 2, ас. 8; Դանիել Բաղրաթյան, Պուլկարահայուն տարեցույց, Սոֆիա, 1926, էջ 38։

2 Գեղարվեստասեր, Թորոս Թորամանյան Պուլկարիս մեջ (Երևան, Սոֆիա, 12. VI. 1964)։

— Կցավիմ,—պատասխանեց անխռով Թորամանյանը,—ոչ թե ինձի, այլ ձեզի համար։ Բայց օր մը դուք ձեր ձեռքով այսօրվան իմ ծրագիրներս և խորհուրդներս պիտի իրագործեք։

Բուլղարիս լուսավոր ապագայի մասին հայտնած իր անսուտ կարծիքը չափեն ավելի հուզեց նախարարը, որ զինք ողջագուրեց...»[3]։

1896 թ. վերջերին Թորամանյանը, հավանաբար, նոր պատվեր ստանալու ակնկալությամբ նախ Շումեն, ապա Վառնա է տեղափոխվում, գրեթե անմիջապես աշխատանքի անցնում նշանավոր գրող, նույնպես Կ. Պոլսից վտարանդի, Մելգոն Կյուրճյանի (Հրանդ) կազմակերպած հինգդասյա Արծրունյան վարժարանում։ Նա դասավանդում է երկրաչափություն, գծագրություն և նկարչություն։ Դժբախտաբար, մեկամյա գոյությունից հետո դպրոցը միառժամանակ փակվում է, իսկ տնօրենը վերադառնում է Կ. Պոլիս։

Արծրունյաց վարժարանում դասավանդելու առաջին իսկ օրերին տեղի հայկական համայնքի թաղական խորհրդի գործուն աշխատակից Հակոբ Մավիյանը Թորամանյանին խնդրում է պատրաստել վարժարանի նոր շենքի նախագիծը և հանձն առնել դրա կառուցման աշխատանքները։ Ճարտարապետը սիրով է ընդունում այդ առաջարկը և, պատվիրատուի հետ գործակցելով, նախաձեռնություն ցուցաբերում դպրոցի համար միջոցներ ձեռք բերելու հարցում[4]։ Այս տվյալները վկայում են այն մասին, որ Թորամանյանը Վառնայում մասնագիտականից բացի ծավալել է հասարակական և մանկավարժական գործունեություն։ Շենքը պետք է կառուցվեր հայկական առաքելական ս. Սարգիս եկեղեցու բակում, որտեղ գտնվող դպրոցական հին շենքը երկու տարի առաջ հրո ճարակ էր դարձել։ Այդպիսի ընտրությունը բխում էր տարածքի համար միջոցներ չծախսելու և ինչքան հնարավոր է՝ խնայողության անհրաժեշտությունից։

Բուլղարական իշխանությունները, պատճառաբանելով, որ դպրոցի բակի համար նշված տարածքը փոքր է, արգելում են շենքի կառուցումը։ Թորամանյանի խորհրդով Հ. Մավիյանը և թաղական խորհրդի անդամները որոշում են դպրոցի նախագիծը տեղական իշխանությունների հաստատմանը ներկայացնել՝ որպես Ազգային առաջնորդարանի շենքի գծագրեր։ Սակայն Վառնայի հայկական համայնքի աղայական դասի ներկայացուցիչ Սարգիս Գաբրիելյանն այդ մասին հայտնում է տեղական իշխանություններին, կամենալով խոչընդոտել դպրոցի կառուցմանը, մանավանդ որ ինքն այդ նպատակով հանգանակած ղգալի գումարները յուրացրել էր «թայֆայական» նպատակների համար[5]։ Այնուամենայնիվ, 1897—1898 թթ. կառուցվում է հայկական դպրոցի նոր շենքը (նկ. 1), որի դռները բացվեցին ավելի քան 100 հայ աղջիկների ու տղաների համար։ Մինչ այդ հայկական տարրական դպրոց էին հաճախում ընդամենը մի քանի տասնյակ հայ տղաներ։

Արծրունյաց նորաբաց երկսեռ վարժարանում սկսեցին դասավանդել Թորամանյանին բախտակից բազմաթիվ հայ ուսուցիչներ, որոնք խուսափել էին թուրքական կոտորածներից։

Վառնայում Թորամանյանը հայտնի էր «Թորոս քալֆա» անունով[6]։ Նրա

---

3 Նույն տեղում։ Լ. Կյուրեղյանի՝ Բուլղարիայում հնգամյա գործունեության արդյունքներից են Վառնայի Ազգային թատրոնի և Ռուսեի հին քաղաքապետարանի շենքերը։ Նա Թորամանյանի հետ գրեթե միաժամանակ՝ 1900-ին, հեռացել է Բուլղարիայից, գնացել Պոլիս, ապա կրեին Իտալիա։ Կ. Պոլսի «Շանթ» պարբերականում 1911—1912 թթ. տպագրել է «Ճարտարապետության իններորդ միջազգային համաժողովը» հոդվածաշարը։ Նրա գրչին են պատկանում «Կարս և Արդահան» (Վենետիկ, 1949) և այլ աշխատություններ։ Տե՛ս նաև Գ. Խ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. 2, Երևան, 1981։

4 Հայրենիք, Բոստոն, 1897, № 7—8, էջ 117։

5 Իրավունք, Վառնա, 27. VIII. 1903։

6 «Քալֆա» (Թուրքերեն, բառացի՝ ենթավարպետ), գործածվում է նաև ճարտարապետ իմաստով։

կառուցած շենքերն էլ այդ անունով են ճանաչվել, մինչդեռ ազգանունը հայտնի չի եղել։ Դրանց նույն անձին պատկանելը «շատ սր պատմական տվյալներով հաստատված է արդեն»,—ասում է Վառնայի բնակիչ Հ. Հաճոլյանը, ապա ավելացնում. «Հակառակ իր համեստ արտաքինին, ան ապշեցուցած է բոլորը իր նշանակելի կարողություններով։ Վառնայի քաղաքացիները հրճվանքով կդիտեին եղեր զինքը շինություններու մոտ՝ նոանդուն և բարձրաձայն, հրահանգներ տալով և վիճաբանելով իտալացի քարտաշներու հետ խառն ֆրանսա-իտալերենով և զարմանքով հարց կուտան եղեր, թե այս նո՞ւյն «Թորոս քալֆան» է, զոր հաճախ կտեսնեն եղեր նստած «Արմենիա» սրճարանի իր սիրած անկյունը, լուսամուտի մոտ և համեստ, լռակյաց ու միշտ խորասուզված՝ իր ամենօրյա թեյը կխմե եղեր, բոլորովին մենկուսացած սրճարանի ժխորեն»[7]։



Նկ. 1. Վառնա. Հայոց ազգային վարժարանը։

Ազգային վարժարանի շենքի կառուցումը միանգամից բարձրացրել է Թորամանյանի հեղինակությունը Վառնայում, ուր նա աշխատել է զանազան արտոնագրերով։ 1899-ին, որպես ճարտարապետ-կոնդուկտոր, ստացել է տեխնիկական պրակտիկայով զբաղվելու երրորդ կարգի արտոնություն, որի մասին հաղորդագրություն է տպագրվել «Държавен вестник»-ի 1899 թ. № 16-ում և այլ թերթերում։ Այդ մասին Ն. Գասպարյանը գրում է. «Պուլկարիո վերին մարմին՝ պետական նախարարության կողմե, որ պաշտոնապես իրավունք տված է Թորամանյանին գործել բովանդակ Պուլկարիո մեջ որպես օրինավոր ճարտարապետ, 1899 տարվո նո. 55 թիվ որոշմնագրով... Նույնպես նախարարական մարտ 28-ին հրամանագրով արտոնած է ստանձնել նաև պետական շենքերու շինության և մասնակցել նվազուրդներու»[8]։ Նույն

[7] Հ. Հաճոլյան, Թորոս Թորամանյանը Բուլղարիայում (Սովետական արվեստ, 1965), № 9, էջ 48—49)։

[8] Ն. Գասպարյան, Լուսանցքի նոթեր (Երևան, Սոֆիա, 10. VII. 1964)

թվի ապրիլի 1-ին Վառնայի քաղաքապետարանի պաշտոնագրով հատուկ պատվո վկայական է տրվել նրան՝ ի գնահատություն իր կատարած աշխատանքների։ Թորամանյանը հնամապատասխան վկայագրեր է ստացել նաև իր կառուցած շենքերի տերերից, որոնք, դժբախտաբար, չեն պահպանվել։

Վառնայում Թորամանյանը կարճատև կապեր է ունեցել Կ. Պոլսից գաղթած ճարտարապետ Կարո Պալյանի հետ, երբ ինքը քաղաքի լավագույն թա-



Նկ. 2. Վառնա. Բարսեղ Մանուկյանի տունը։

ղերից մեկում կառուցում էր Դ. Մանուվի տունը, որի համար, առանց պատճառը նշելու, Պալյանն ասում է, թե «հետո սուղի էր նստել Թորամանյանին»[9]։ Կ. Պալյանը Վառնայում չի մնացել, մեկնել է Սոֆիա, ուր մինչև 1903 թ. աշխատել է մի բուլղար ճարտարապետի մոտ իբրև օգնական, իսկ ապա կնոջ հետ վերջնականապես տեղափոխվել Կահիրե։

Բուլղարիայից Թորամանյանը անցնում է Ռումինիա, Գալաց քաղաք[10] (1900 թ.)։ Դա տնտեսապես աշխուժացող նավահանգիստ և հայկական ոչ մեծ գաղթօջախ էր երկրի արևելքում, ուր հայությունը շատանում էր Պոլսից և Թուրքիայի ներքին գավառներից փախուծների հաշվին, ուներ հայկական եկեղեցի և մշակութային օջախներ։ Ըստ երևույթին, այստեղ էլ Թորամանյանին զբաղարտել էին իշխանությունների առաջ, քանի որ Ատրպետը նշում է, թե «Համիդ Երկրորդի լրտեսները նրան հետամտում էին»[11]։ Թորամանյանն իր ինքնակենսագրությունում գրել է. «Թեև գործս հաջող և գնահատված էր պետական շրջանակներից, այնուամենայնիվ, մի անակնկալ հիվանդության պատճառով բժիշկները ստիպեցին ինձ աշխատանքից հրաժարվել և երկա-

9 Կ. Պալյան, Անմահ անուն [ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին, անտիպ ժողովածու (կազմողներ՝ Գ. Թորամանյան, Մ. Մազմանյան, Ն. Պապուխյան)]։

10 Ատրպետ, Մեծ ճարտարապետը (նույն տեղում)։

11 Նույն տեղում։

բատև հանգիստ ունենալ շրջագայելով»[12]։ Թե որքանով է ճիշտ հիվանդության պատճառաբանությունը՝ դժվար է ասել, բայց ակնհայտ է, որ Թորամանյանն այլևս չի կառուցել և իր խնայողությունների հաշվին ճանապարհորդել է, գիտելիքները հարստացնելով տարբեր երկրների հուշարձանների հետազոտությամբ։ Ի վերջո, 1903 թ. կեսին Փարիզից ուղևորվել է Անի և սկսել հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության իր մեծ առաքելությունը։

Նկ. 3. Վառնա. Հակոբ Մավիյանի տունը։

Սոֆիայում, Վառնայում (մինչ այդ՝ Կ. Պոլսում) Թորամանյանի կառուցած շենքերի մասին մեզ կցկտուր տեղեկություններ են հասել, որոնք, այնուամենայնիվ, խոսում են դրանց արժանիքների, այդ թվում՝ ինքնատիպության մասին, թեպետ ոճական առումով դրանք հայկական չեն։ Պահպանվել է նրա՝ Վառնայում կառուցած շենքերի մեծ մասը[13]։ Առաջինը Հայոց աղ-

12 Թ. Թորամանյան, Իմ կենսագրությունը (նույն տեղում)։

13 Այդ շենքերի մեծ մասը հայտնաբերել է Վառնայի բնակիչ Հ. Հաճոլյանը (տե՛ս նշվ. հոդվ.)։ Մեր հաղորդած տվյալների հիման վրա այդ շենքերի մեծ մասը «Երևան» մշակութային միության նախագահ Տիրան Բարիքյանի և քարտուղար Միքայել Տոնիկյանի նախաձեռնությամբ լուսանկարել է Օհան Օհանեսյանը, որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում։ Լուսանկարներից երկուսը նրանք տրամադրել են Թորամանյանի գործունեության մասին մի փոքրիկ հոդված տպագրելու համար [տե՛ս Հակոբ Գարագաշյան, Թորոս Թորամանյան—Մեծ ճարտարապետը (Երևան, 11. VI. 1988)]։ Տպագրված լուսանկարներից առաջինը ներկայացնում է Բարսեղ Մանուկյանի տունը, երկրորդը՝ մի հինգ հարկանի շենք, որը «Սպլենդիդ» հյուրանոցն է։ Վերջինս ակնհայտորեն Թորամանյանի ստեղծագործությունը չէ, էապես տարբեր է նրա կառուցած շենքերից։ Շփոթությունն առաջացրել է հյուրանոցի անունը։ Նույն անունն էր կրում նաև Թորամանյանի կառուցած հրուշակարանը՝ «Սպլենդիդ կաֆենա»։ Վերջինս եռահարկ էր, ուներ անկյունային դիրք և, ինչպես նշեցինք, ոճով էլ տարբեր էր։

գային վարժարանի կառույցն է[14], երկրորդը՝ «Սպլենդիդ կաֆենն»՝ քաղաքի կենտրոնական ամենաբանուկ պողոտայի սկզբին։ Նա կառուցել է նաև մի այլ հասարակական շենք՝ ժողովրդական բանկը՝ Նիկոլա Վապցարով փողոցում (նախկինում՝ № 8), ուր այժմ երեք այլ հիմնարկություններ են տեղավորված[15]։ Մյուս կառույցները բանուկ փողոցների վրա գտնվող հետևյալ շինություններն են՝ 1. Պոլսից եկած մեծահարուստ Բարսեղ Մանուկյանի տունը՝ Լենինի պողոտայի և Շեյնովո փողոցի անկյունում (Ցար Բորիս հրապարակ, նկ. 2), 2. Վենետիկի ճեմարանավարտ, Վառնայի իտալակ:ան երբեմնի հյուպատոս Հ. Մավիյանի տունը՝ Լենինի պողոտայի և Իվան Վազովի (№ 1) փողոցի անկյունում (նկ. 3), 3. Սիլիստրայից տեղափոխված վաճառական Սարդիս Քյուրդ:անի տունը՝ Դիմիտրի Բլագոևի պողոտայի և Ասեն Զլատովի փողոցի անկյունում (նկ. 4), 4. Վառնացի գինեպան և նպարավաճառ Դանիել (Դանիել) Մանովի տունը Գեորգի Դիմիտրովի պողոտայում։ 1923 թ. այն քանդվել է փողոցը լայնացնելու պատճառով, 5. Վառնայի իսպանական երբեմնի հյուպատոս Օհանես Կայազատեի 1900 թ. կառուցած տունը (հետագայում հյուրանոց)՝ Գոսպագին Հաջի Իվանովի (№ 6) փողոցում, 6. Շենք Դրաչոմեն (№ 44) փողոցում[16]։

Նկ. 4. Վառնա. Սարդիս Քյուրդյանի տունը։

Ազգային վարժարանը կիսանկուղային հարկով, երկհարկանի, քարակերտ, ոչ մեծ շենք է, որը կառուցված է եկեղեցու անձուկ շրջափակի խորքի

---

14 Ն. Գաղթական, Արձագանք Վառնայէ (Բյուզանդիոն, 22. XI.—4. XII. 1897)։

15 Այդ շենքի մասին Թորամանյանի դստերը՝ Նաղելիին, հաղորդել է հայրենադարձ ժիրայր Սիմոնյանը։

16 Նշված շինություններից հինգը, ինչպես և դպրոցի շենքը հիշատակել է Հաճոլյանը (տե՛ս նշվ. հոդվ.), իսկ 6-րդ շենքի, կաֆեի ու բանկի շենքերի մասին տեղեկությունները վերցրել ենք Ն. Թորամանյանի անձնական արխիվից։

անկյունում։ Շնորհիվ հարկերի և լուսամուտների բարձրության, դասարաններն օդասուն էին ու լուսառատ[17]։ Միջոցների խնայողության անհրաժեշտությամբ էր պայմանավորված արտաքին ձևերի պարզությունը, որը, սակայն, չի նսեմացնում ընդհանուր հորինվածքի վեհությունը։ Վերջինս պայմանավորված է XIX դ. վերջի իտալական ճարտարապետության հաչող կիրառումով։ Հատակագծի սիմետրիան առաջակարկառ մի ծավալով նպաստել է գլխավոր՝ բակի ճակատի հանդիսավոր լուծմանը։ Շքամուտքը արված է բարոկկո ոճի աստիճաններով։ Սեփածո ճակատների պարզ հարդարանքը կազմված է հարկերի և ճակատների հարթությունները առանձնացնող գոտիներով և բացվածքների հարթ-ատամնավոր պարակալներով։ Հակառակ կողմի ճակատը լուծված է նույն սկզբունքով։ Շենքի անկյունային դիրքի պատճառով կողքի ճակատը ևս բացվում է փողոցի վրա, սիմետրիկ է, բայց առանց որևէ ցցուն շեշտի։

«Սպլենդիդ կաֆեն»՝ բյուզանդական և գոթական ոճերի խառնուրդով ձևավորված բարձր, լայնանիստ ու ամրակուռ այդ շենքը, հսկայն ուշադրություն է գրավել իր կառուցվածքով և հարդարանքով. տեղանքի նեղվածքի պայմաններում այն բարձրանում էր ընդամենը երկու միաձույլ գեղեցիկ սյուների վրա։ Վերին հարկի առաստաղից պողպատյա հարմարանքներով կախովի փուռեր էին տեղավորված[18]։ Ոճական առումով Թորամանյանն այստեղ ակնհայտորեն շարունակել է Սոֆիայի Ազգային ժողովի պալատի՝ իր նախագծով սկսած բուլղարական ճարտարապետությունը վերածնելու ջանքերը։

Թորամանյանի կառուցած հասարակական շենքերից մյուսը ժողովրդական բանկն է՝ եռահարկ, քարե ֆակտուրայով, ծեփածո ճակատով։ Նյութերի բացակայության պատճառով այս շենքի ճարտարապետության վերաբերյալ ուրիշ մանրամասներ չենք կարող նշել։

Ստեփան Գայազատեի տունը գտնվում է փողոցի եղրին՝ դեպի արևելք ուղղված գլխավոր ճակատով։ Այն կիսանկուղային հարկով երկհարկանի ինքնատիպ կառույց է, որի վերին հարկի առաստաղները համապատասխանում են երկթեք տանիքի լանջերի ուղղությանը։ Տարածական այս հորինվածքը թելադրել է գլխավոր ճակատի սիմետրիկ լուծումը, ուր առանցքը շեշտված է առմուտքի խորշով, պատշգամբով և վերին լուսամուտների՝ բարձրությունների դեպի ճակատի կենտրոնը աստիճանական աճով։ Զուսպ հարդարանքը ոչ ցցուն տարրերով, վերին կամարակապ լուսամուտներով և այլն, դասականից տարբեր է և հարազատ՝ հայկական ճարտարապետությանը։ Դեպ, վերջինիս առանձնահատկություններն այն ժամանակ դեռևս հայտնի չէին մասնագետներին։

Նախկինում Ցար Բորիս կոչվող հրապարակի զարդը և քաղաքի լավագույն շենքերից մեկն էր Բարսեղ Մանուկյանի տունը։ Կղմինդրապատ ձեղնահարկով երկհարկանի այս շենքն աչքի է ընկնում իր ծեփածո, սյունազարդ ճակատների էկլեկտիկ ոճով, Վերածննդի և բարոկկոյի նուրբ տարրերի համակցմամբ։ Անկյունային դիրքի պատճառով շեշտված է շենքի հենց այդ մասը՝ բացվածքներով, պատշգամբով, աղեղնակապ ճակտոնով և գմբեթավոր աշտարակով։ Վերջինս ձեղնահարկի ցցուն լուսամուտների և ճակատի սյունակարգերի հետ շենքին վերասլացություն է հաղորդում։ Հորիզոնական ջլատումները հարկաբաժան նշանակություն ունեն և խստորեն ենթարկված են սյունակարգային լուծմանը։ Պողոտայի կողմում է գլխավոր ճակատը, որի հարդարանքն ավելի ճոխ է։ Դրա նուրբ մանրամասների հետ առաջին հարկի մեծ բացվածքները թեթև ու կենսուրախ տեսք են հաղորդում։ Շենքի

---

17 Ե. Գ ա ղ թ ա կ ա ն, նշվ. հոդվ.։

18 Ե. Գ ա ղ թ ա կ ա ն, Հայ արհեստագործներն օտարության մէջ (Բյուզանդիոն, 31. I. 1898), Ա տ ր պ ե տ, նշվ. հոդվ.։ Այս շենքը հայտնաբերելու ջանքերը հաջողության չեն հասել։

վերակառուցումների մասին տեղեկանում ենք Հ. Հաճոլյանից, որը գրում է. «Հետագային գետնահարկը մեկ քանի մասերու բաժնված գեղեցիկ հոնիական երեք քառորդ սյուներով աննպատակահարմար վերանորոգման մը հետևանքով կորսնցուցած է իր ներդաշնակությունը շենքին ընդհանուր ոճին հետ... Ամբողջ շենքին տակը կար ընդարձակ սրահ մը լավ լուսավորված թուջե պատրաստված գեղեցիկ սյուներով։ Այս գետնափոր հարկը ուներ հանդիսավոր մուտք, որ կգտնվեր շենքին արևելյան կողմը և որ հիմա խանութի վերածված է։ Նույնպես խաթարված են պատշգամբը, որը նախապես ուներ գեղեցիկ վանդակապատ (balustrade) և ֆրոնտոնը, որը զարդարված էր բարելյեֆով (հարթաքանդակով)։ Տան մուտքը նախապես շենքի հյուսիսային կողմեն եղած է և փոքր բակի մը կանցնվեր. այժմ այդ բակին տեղը խանութ մը շինված է, վրան տեռասայով։ Այս վերակառուցումով շենքը շատ բան կորսնցուցած է իր ամբողջական սիլուետի ներդաշնակությենեն»[19]։

Հ. Մավիյանի տան մասին Հաճոլյանը նշում է, որ այն նույնպես Վերածննդի և բարոկկոյի տարրերով ձևավորված հոյակապ շենք է, որ նրա հարավային ճակատի ձախ կեսը 1910-ական թվականների կեսին կառուցվել է ուրիշ նարտարապետի նախագծով, որը հաջողությամբ կրկնել է շենքի էական տարրերը։ «Այսպիսով շենքն այժմ կներկայացնե մի ներդաշնակություն՝ բացառությամբ էրկերի, որն ավելացված է Թորամանյանից հետո»,—գրում է նա[20]։ Այս տունը նույնպես ձեղնահարկով անկյունային երկհարկանի շենք է, որի մուտքը կողքի ճակատից է, մինչդեռ պողոտայի կողմն ամբողջությամբ խանութ է (այժմ՝ կապի բաժանմունք)։ Նրա ծեփածո ճակատները նույնպես հորիզոնական ջլատումներով անջատված, բայց սյունակարգային լուծմամբ կապակցված հարկերով են ձևավորված։ Շենքի անկյունային մասը նույնպես շեշտված է բացվածքների և պատշգամբի առկայությամբ։ Ճակատները միանշանակ չեն։ Գլխավոր ճակատում, պողոտայի կողմից խանութներին հատկացված առաջին հարկն իր մեծ բացվածքներով կոնտրաստի մեջ է երկրորդ հարկի հետ, որն, ինչպես միշտ, ունի ավելի ճոխ հարդարանք։ Այստեղ առաջին հարկի նախկին ռուստավոր մակերեսն այժմ քարով է երեսպատված։

Սարգիս Քյուրգյանի եռահարկ տան մասին Հաճոլյանն ասում է, որ այն էկլեկտիկ ոճով և իր ժամանակին ոչ հատուկ մեծ բացվածքներով հակված էր դեպի նոր ճարտարապետությունը, բայց արտաքին ծեփի նորոգման ժամանակ կորցրել է իր նախկին տեսքը[21]։ Չնայած փողոցի երկու կից ճակատների առկայությանը, այստեղ շենքի անկյունը չի շեշտված։ Երկու ճակատներում էլ ձևավորումը համաչափ է. գլխավոր ճակատը ավելի ճոխ է հարդարված, որտեղ կարևոր տեղ է զբաղեցնում ձուլածո քանդակազարդը։

Դանիել Մանովի՝ այժմ քանդված շենքի մասին Հաճոլյանը գրում է, թե ունեցել է վաղ նորդասական ձևեր՝ հոնիական սյուներով և անկյունային խոյազարդերով, ինչպես նաև սներևույթ ձեղնահարկ (attik)։ Նրա տեղում կառուցված շենքի անկյունում դրվել են հին շենքի սյուները[22]։

Բնակարանի ճարտարապետությանը հատուկ զուսպ ձևեր ունի անհայտ պատկանելության այն շենքը, որը գտնվում է Դրագոմանն փողոցում։ Այն կերտված է աղյուսից, սպա ծեփված է։ Խարսխային մասը երեսպատված է քարե բազմանկյուն սալիկների անկանոն շարվածքով։ Ճակատի հարդարանքում գերիշխում են հորիզոնական ջլատումները։ Առաջին հարկը ձևավորող որմնասյուները հարթ են, մանրամասները՝ տրամատավոր և ոչ ցցուն։ Ուշագրավ է, որ շքամուտքին երկու կողմից կից են Թորամանյանի մյուս շենքերին հատուկ նեղ լուսամուտներ, որոնք նպաստելով նախամուտքի լուսավորությանը, գեղարվեստական ինքնատիպ լուծում են։

---

19 Հ. Հաճոլյան, նշվ. հոդվ., էջ 49. նաև Ն. Գասպարյան. նշվ. հոդվ.։

20 Հ. Հաճոլյան. նշվ. հոդվ., էջ 50

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, որ ստեղծագործական կյանքի սկզբնական տարիներին Թորամանյանի կառուցած շենքերն ունեցել են քաղաքաշինական ուշագրավ հատկանիշներ՝ իրենց դիրքին համապատասխանող ծավալատարածական հորինվածքի, ճաշակավոր հարդարանքի և լավ ստվերանկարի շնորհիվ։ Դրանք աչքի են ընկել տվյալ վայրի կենցաղին համապատասխանող ներքին հարմարավետությամբ, նպաստավոր կողմնորոշմամբ (դեպի հարավ և արևելք), ֆունկցիոնալ և կառուցվածքային առաջադիմական լուծումներով։ Վառնայի շենքերի նման ունեցել են աղյուսե պատեր (որոնք արտաքուստ ծածկված են քարով), փայտե միջհարկային ծածկեր, առանձին դեպքերում՝ մետաղական կոնստրուկցիաներ և կղմինդրյա կտուրներ, հաճախ՝ կիսանկուղային և ձեղունի հարկեր։ Շենքերից ոչ մեկը չի կրկնել մյուսի ձևերը։ Արտաքին ձևավորմամբ դրանք համապատասխանել են XIX դ. վերջի եվրոպական քաղաքներում տարածված Վերածննդի, բարոկկոյի, նոր դասական, մասամբ նաև մոդեռն ոճերին, առանձին վերցրած կամ համատեղ կիրառմամբ, եղել են համեստ, բայց շրջապատի շենքերից տարբեր՝ իրենց հորինվածքով և ճաշակավոր հարդարանքով։

Սեփական նախագծերով անձամբ կատարած շինարարությունը Թորամանյանին տվել է փորձառական այնպիսի հմտություններ, որոնք հետագայում մեծապես նպաստել են պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրությանը և որոնցից զուրկ էր այդ ժամանակի ճարտարապետության տեսաբանների մեծագույն մասը։ Այս առումով Թորամանյանի՝ Բուլղարիայում ծավալած գործունեությունն առանձնահատուկ նշանակություն ունի մեծանուն գիտնականի ստեղծագործական կյանքում։

ДЕЯТЕЛЬНОСТЬ ТОРОСА ТОРАМАНЯНА В БОЛГАРИИ

З. М. ГАСАБЯН, Н. Ц. ПАПУХЯН

Резюме

Основатель армянской архитектурной науки Торос Тораманян свою профессиональную деятельность начал как архитектор-практик и строитель. Резня армян в Турции осенью 1895 г. заставила Т. Тораманяна переехать в Болгарию, где он оставался до 1900 г. Построенные им в Софии и Варне жилые дома и общественные здания отличались передовыми конструктивными решениями и самобытной архитектурой, в большинстве случаев соответствовали стилям, распространенным в городах Европы конца XIX в. Строительство по собственным проектам дало Тораманяну практический опыт, способствовало глубокому и многостороннему изучению им архитектуры Армении.

TOROS TORAMAMIAN'S ACTIVITY IN BULGARIA

Z. M. GHAS BIAN, N. Ts. PAPUKHIAN

Summary

The founder of Armenian architectural science Toros Toramanian began his professional activity as architect-practician and builder. The massacre of Armenians in Turkey in Autumn of 1895 made T. Toramanian move to Bulgaria, where he stayed till 1900. Houses and social buildings built by him in Sofia and Varna, varied with advanced constructive solutions and original archetecture, in most cases corresponded to the styles, spread in the cities of Europe at the end of the XIXth c. The building after own projects gave Toramanian a practical skill, assisted the deep and polygonal research of architecture of Armenia by him.